



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆ ԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒ ՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆ ԻԱՅ ԾԱՌԱՔ 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1875

ԹԻՒ 1025

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հէրոսկոփինայի ապստամբութիւնն երթալով կըտկարանայ և կըզսպուի օսմանեան զօրաբանակին գործունէութեամբը : Յանցելումն 2000 հոգիէ բաղկացեալ ապստամբաց գունդ մի ճեփքէթ փաշա զօրապետէն շարաշար հալածութեամբ փախաւ 'ի սահմանս Գառատաղի' պատերազմին դաշտին վերայ թողլով 160 սպանեալ : Բազումք յապստամբաց օրըստօրէ կուգան և անձնատուր կըլինին տեղական իշխանութեց, վերջին օրերս Բորովօ նահանգին 18 գիւղօրէից բնակիչքն՝ որք գործունէայ մասնակցութիւն ունէին ապստամբաց հետ զէնքը թողլով իրենց հնազանդութիւնը յայտնեցին :

Հեռագիրն կըձանուցանէ թէ Ռուսիան և Գերմանիան յայտագիր մի յուղարկեալ են Աստրոհոնդարիոյ կառավարութեան 'ի մասին Հէրոսկոփինայի խնդրոյն : Այս յայտագրով յիշեալ տէրութիւնքն՝ Աստրիոյ կը յանձնեն Արևելեան գործոց խնամատարութիւնն . այսինքն իբրև գրացի և սահմանակից տէրութիւն՝ հոգ տանի հարկաւոր եղած տնօրէնութիւններն 'ի գործ գնել, որպէսզի Արևելեան խնդիրն ծանր կերպարանք չառնու Հէրոսկոփինի ապստամբութեան պատճառաւ :

Գերմանիոյ կայսրն հասաւ 'ի Միլան յայցեալութիւն իտալիոյ թագաւորին . որ մեծ փառաւորութեամբ և բարեկամական անկեղծ սիրով ընկալաւ զՆորին Վեհափառութիւնն :

Ի հանգիստաւ հացկերոյթն՝ որ տեղի ունեցաւ ամսոյ 8—20ին 'ի պատիւ Կիլլոմ կայսեր, իտալիոյ թագաւորն առաջարկեց գլխի խմել 'ի կենդանութիւն կայսեր և կայսրուհոյն, և թարգման լինելով զգայմանց իտալացի ժողովրդեան իւր խնդակցութիւնն յայտնեց վասն բարեկամոյ կացութեան Գերմանիոյ, յաւելցնելով զբարեմտութիւն իւր վասն շարունակու-

թեան բարեկամական անկեղծ յարաբերութեց, հաստատելոց 'ի մէջ երկուց տէրութեանց :

Կիլլոմ կայսրն պատասխանեց՝ իւր շնորհակալութիւնն յայտնելով վեհաթագաւորին վասն սիրալիր զգացմանց որով ընկալաւ զինքն, և այս բարեպատեհ առթիւ փութացաւ ծանուցանելու զհամակրական սէրն Գերմանիոյ ազգաց վասն իտալիոյ, յաւելցնելով թէ երկուց վեհապետաց բարեկամական յարաբերութիւնքն պիտի շարունակեն խաղաղութեան հաստատուն երաշխաւորութիւններ տալու Եւրոպիոյ :

Ինչպէս կըտեսնուի, միացեալ Գերմանիոյ և միացեալ իտալիոյ մէջ բարեկամական անկեղծ յարաբերութիւնքն ամուր հիմանց վերայ՝ այսինքն փոխադարձ օգտից վերայ հաստատեալ լինելով, տեղական պիտի լինին :

Բարձրագոյն Գրան որոշած գանձային վերջին կարգադրութեանց վրայօք՝ Եւրոպիոյ լրագրաց դատողութիւնքն իրարմէ յոյժ տարբեր են : Քանզի մինչդեռ ոմանք խստիւ կըբատապարտեն զնոյն կարգադրութիւնքն, ուրիշ խոհական և արդարասէր լրագիրք յառաջ կըբերեն թէ օսմանեան կայսերական կառավարութիւնն առաջինն չէ որ այսպիսի անհրաժեշտ ընթացք մի ունեցաւ . ընդհակառակն՝ պատմութիւնն կըցուցնէ մեզ թէ՛ նախ քան զնա, Եւրոպիոյ գլխաւոր շատ տէրութիւնք միևնոյն ընթացքն ունեցան : Այս տէրութիւններէն գրեթէ և ոչ մէկն վարանեցաւ, գանձային տաղանայի մը ժամանակ, զոհել հասարակաց պարտուց տուկոսեաց մէկ մասը՝ առ 'ի ապահովել զվճարումն մնացեալ մասին : Միտքերնիս բերենք, կըսէ Լա Բոբլե-Բոնպան ժեռեալ Օրիփէն օրագիրն յորմէ քաղած եմք նախընթաց տողերն, միաքերնիս բերենք, կըսէ, զոր ինչ պատահեցաւ 'ի Գաղղիա յամին 1795 և զոր ինչ տեղի ունեցաւ Աստրիոյ մէջ 1811ին : Միթէ նոյն ժամանակներն 'ի գործ դրուած գանձային կարգադրութիւնքն՝ (որք յոյժ փաստակար էին հասարակու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի ՆՈՐԶՈՒՂԱՅԵ(1)

Ներկայ տարւոյս Յունիս 3 ամսաթուով՝ Նորջուղայու Ամենափրկչեան վանքէն՝ առաջնորդական փոխանորդ արժանապատիւ Խաչատուր վարդապետ Կարապետեանի՝ յանուն վեհափառ Հայրապետի ուղղած գրութեանէն հետեւեալ պարբերութիւնքը քաղել և մերազնից հաշորդել արժան և կարևոր կըհամարիմք :

Թէև գրութեան մէջ յիշուած որոգայթներն և ի տարածումն բողոքականութեան օտարաց ջանքերն կանխաւ քաջայայտ եղած են վեհաՀայրապետի մերում, զորս առաւել ընդարձակ տեղեկագրած է գերա. Գրիգորիս արքեպիսկոպոս Յովհաննէսեան, և արդէն (1872—3 թուականներում) պէտք եղած հրահանգները և հրամանները ստացած է, և ի Հնդկաստան երթալու նպատակն ոչ եթէ միայն ի վտանգի եղող Հնդկահայոց այցելոյ և օգնելոյ համար, այլ նաև անդ կարևոր դպրոցներ հաստատելոյ և այլ մի քանի ազգային հոգացողութիւնք և եկեղեցական կարգադրութիւններ տնօրինելոյ համար է, ինչպէս նաև Նորջուղայու Հայոց դպրոցաց համար եղած մի քանի կտակները ի կարգի դնելով, ևս համեստ Ծաղիկ խաթունին՝ Բրուս կոչուած և ծպտեալ բողոքական քարոզ-

չին խնամոց անգիտութեամբ և միամտաբար յանձնած դպրոցը աղատելոյ և այլոց և այլոց պիտի ծառայէ : Եւ թեմին Առաջնորդ և արքեպիսկոպոս լինելով՝ այս ամենի և այլ նպատակաց մէջ անշուշտ աւելի պիտի յաջողի և քան զայլս արգիւնաւոր կըլինի՝ և ինչպէս ցարդ եղած փորձերէն այլ ևս տեսնուած է՝ թէ այլք հազիւ թէ զանձինս կըխորհին, բայց և այնպէ՛ ի խրախոյս վերոյիշեալ վարդապետին գովելով՝ նորա եռանդը և ջանքը՝ արժան կըհամարիմք հետեւեալ ծաղկաքաղք ինչպէս նաև յայտարարութիւնը և ցուցակը ԱՐԱՐԱՏ ամսագրոյս մէջ հրատարակել :

Հետեւեալ ծաղկաքաղքն նաև բանիմաց մերազնեայք կարող են նկատել, որ բողոքականք ժողովրդեան կրած տարաբաղտ և դառնաթին վտանգից և ձախորդութեանց միջոցները յարմար առիթ գտանելով՝ մարդասիրութիւնը բուրովին տարբեր իմաստով և խորամանկութեք մի տարբեր և չար նպատակի միջոց ըմբռնած՝ կըտքնին միամիտ ժողովուրդը խաբել և պատրել՝ զնոսա ի բողոքականութիւն և յազգուրացութիւն հրապուրելով և գլորելով . այս ի բարեգործութիւն կանեն՝ բայց փոխարէնը ազգուրացութիւն կընիւթեն, անկօնութիւն կամ հաւատուրացութիւն կըսերմանեն և այլն և այլն : Այսպէս կըպատուիրէ Տիեզերաց Փրկիչ Յիսուս Քրիստոս, այսպէս պիտի լինի քրիստոնէսութիւնն, այսպէս կուսուցանէ և կըպահանջէ չաղաքակրթութիւնն և մարդասիրութիւնն : Զանի մեծ

թեան համար) կրցան արգիւել զվերահաստատութիւնն վարկին (credit) այս երկուցազգաց : Կրցան արգիւել մանաւանդ զԳաղղիան հսկայական փոխառութիւն մի ընելէ, որոյմեծութիւնն օրինակ չունի պատմութեան մէջ : Ստոյգ է թէ Գաղղիան և Աւստրիան՝ զկնի հարկադրուելոյ այսպիսի միջոցներու ձեռք զարնել, տնտեսական գործոց վարչութեան մասին մեծ գործունէութիւն և խոհեմութիւն բանեցուցին, զոր գուցէ թուրքիոյ մէջ դժուար լինի 'ի գործ դնել : Սակայն այս նկատմամբ ևս, արդարութեան դէմէ չափազանց մտատանջութիւն ունենալ :

Թուրքիոյ գանձային նոր կարգադրութեանց վերաբերեալ շրջաբերական նամակ մի՛ Բ. Դրան արտաքին գործոց նախարարին կողմանէ Հոկտ. 2—14 ամսաթուով յուղարկեցաւ օսմանեան դեսպանաց՝ որք օտար տէրութեանց քով կըգտնուին :

Ահաւասիկ յիշեալ շրջաբերականին թարգմանութիւնն, զոր Կ. Պօլսոյ Փոխնախն կըքաղեմք .

«Ելեմտից նախարարը Մեծ—Եպարքոսին հրահանաւ նամակ մ'ուղղեց Օսմանեան կայսերական Պանքային, որպէսզի, իբրև պետութեան Պանքա՝ իւր Լոնտոնայի և Փարիզի մասնաժողովներուն միջոցաւ արտաքին փոխառութեան պայմանագիրներուն հետ բանակցելով նշանակել տայ այն սինտիքներն, որք Կ. Պօլսոյ սինտիքներուն հետ պիտի միանան օսմանեան կայսերական Պանքային հսկողութեամբն ու գործառնութեամբ, և որոց պիտի յանձնուին աւերութեան պարտուց տուկոսներուն ու գլխաւոր վճարաց առաջին կէտին ինչպէս նաև երկրորդ կէտը ներկայացնող արժեթղթոց հարկերն : Հինգիս ամբողջապէս դրամով վճարման յատկացեալ եկամուտները, ինչպէս որ Բ. Դրանն որոշած է ամսոյս ընթացքն հրատարակած վերջին տնօրէնութեանց մէջ :

Օսմանեան կայսերական Պանքան պաշտօն ունի նաև վերոյիշեալ գանձային տնօրէնութեանց ճշգրիտ և հաւատարմաբար գործադրութիւնն ապահովելու համար պէտք եղած

ոճիւր է ի ծովու խորասուսերոյ և խղճուելոյ վտանգի ներքև տագնապող անձի նմանութիւն ունեցող անձանց նեղ վիճակում խոստանալ կամ անել մի օգնութիւն, բայց միևնոյն ժամանակ ջանալ որ ազատեցէ՞ զկնի թրքանան, կամ պարսիկանան, և կամ վերջապէս ազգուրաց և հաւատուրաց լինին :

Արդ աներկմիտ կըյուսամք որ, ինչպէս արժանապատիւ խաչատուր վարդապետն և եկեղեցականք՝ նոյնպէս Պարսկաստանաբնակ և այլ տեղեաց մերազնեայք հետզհետէ քաջ կըհասկանան և կըձանաչեն բողոքականաց և այլոց պատրուակեալ ջանքերը և նպատակները, և հնարաւոր միջոցներով և զգուշութեամբք ապարդիւն կըլծողուն նոցա ջանքերը՝ միանգամայն կըհեռացնեն մարդակերպ գայրերը ի միջոց ժողովրդեան :

Ահաւասիկ յիշեալ ծաղկաքաղքն :

«Թոյլ լինգրեմ՝ ի վեհափառական Օծելութեան Զերմէ խնամհարաբանել ի բացայայտութիւն առաջի գլխոյդ Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ զհանգամանաց աղետալեաց փոքր Հօտիս ձերում, որք ի վտանգս հոգևորս մերձեալտեսանին . զհօտիս ասեմ Զուղայաբնակ և Թէհրանաբնակ և այլն, ազգայնոց մերոց՝ յետադարեան միջոցս ժամանակի յետ գաղթականութեանց ի գրկաց մեծին Հայաստանի՝ օշինչ ստնանել կարացին մայրենի հաւատոյն և ուղղափառ սուրբ կրօնիս, ոչ Պարսկական բազմապիսի մեքենայագործութիւնք և մահառիթ տանջանք և դա-

(1) Արարատայ Օգոստոս ամսագրէն քաղեալ :

« գործարարական պարագայներն ելումսից նա-
« խարարութեան հետ խորհրդակցելով որոշել :
« Այս տեղեկութիւնները կրնաք լրագրաց մի-
« շոցաւ հասարակութեան ծանուցանել »:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Որոշու մեր նախընթաց բուն խոստացաք , անա-
ւասիկ 'ի կարկառայէ յուղարկեալ ընդարձակ նամա-
կըն՝ որ գերա . Գրիգորիս Ս . Արքեպիսկոպոսի 'ի
նայն մայրաքաղաքն ժամանման եւ ընդունելութեան
մասնաւոր պարագայից նկարագիրն է :

Ի կարկառայ , 10 Սեպ . 1875

Յարգոյ խմբագիր Արշալուոյ Արարատեան ,

Քանզի 'ի բազումամաց հետէ՝ այս է ի քառաս-
նից , հազիւ իմն յաջողեցաւ տեսանել Հնդիկս
զԱռաջնորդ ոք մերազնէից այսր շնորհաբեր
հանդիսանալոյ , որ վասն կարեւոր վարկայ զանցս
նորա ցայս վայր աստ եղելոյ 'ի գիր անցուցեալ
ձերդ յարգութեան մատուցանել 'ի հրատարա-
կումն միջոցաւ լրագրոյն ձերոյ , ընդ կատար-
ումն որդիներդեմ ազդատիրարար հաճիլ :

Ի 9 Օգոստ . 1875 թուոյս գերապատիւ տէր
Գրիգորիս որբազան Առաջնորդն Պարսկաստանի
և Հնդկաստանի Հայոց ժամանեցաւ 'ի մայրա-
քաղաքս կարկառայ , որում ընդ առաջ ելեալ
դասք հազիւ որականաց և ոմանք 'ի պատուելի
մերազնէից աստի՛ ընկալան զնա մեծաւ յարգա-
նօք , որ և բնակի արդէն 'ի վերին յարկս հոյ-
ակապ շինուածոյ Նազարէթայ սուրբ եկեղեց-
ւոյս մերոյ աստ պարտուպատշաճ մեծարանօք և
ընդունելութեամբ :

Ի 27 Օգոստ . յարգելի պարոն Թովմաս Մե-
լքունեան եկեղեցական կարկառայ և Չիչայ եկե-
ղեցեացն Հայոց յայտարարական գրով ծանու-
ցումն արար . պատուեալ Հայ հասարակութեան
քաղաքիս զառաջագործութենէ Նորին Սրբազնու-
թեան սակս մատուցման սրբոյ պատարագի 'ի
29 նոյն ամսոյ 'ի տօնի հրաշափառ վերափոխման
Տիրամօրն սրբոյ Աստուածածնին , և խնդրեցաւ
ներկայութիւն ամենեցուն մերազնէից 'ի Նա-
զարէթայ սուրբ եկեղեցին . ըստ այնմ և յառա-
ւօտուն կիրակիէն սկսեալ ժամերգութեանն 'ի
վեցերորդ ժամէ առուն եկին խոնեցան ամե-
նայն բազմութիւնք հետոջետէ մինչև չինելան-
գամ տեղի 'ի ներքս , և 'ի պարտաւորութենէ
անտի արտաքս քան զեկեղեցին կանգնել 'ի
դուլիթ անդր , ընդ որս և 'ի Յունաց՝ յանդի-
ացւոց և յայլ քանի ևս 'ի լատին կաթողիկոց :

Յերանել 'ի խորանէ անտի սրբազան պատա-
րագչին ըստ պատշաճի ժամուն , զարդարեալ
'ի զգեատ ոսկեթել , 'ի թագ ոսկեճամուկ , և
յեմիփորոն փառաւոր , այլովքն հանդերձ սրբոյ
խորհրդոյն շուք մեծ և յարգանս արժանեաց
ընծայեալատպաւորէր 'ի սիրոս հանդիսականացն

ւաղրութիւնք , ոչ բռնութիւնք ուրացողաց , և
ոչ դատապարտեալ վիճակ իւրեանց և այլ հար-
կեցուցիչ դէպք , քանզի այսոցիկ ամենայնի
համբերատար ճշմութեամբ տարեալ՝ անարատ
և ջերմեռանդ կացին մնացին յանբիծ և ուղղա-
փառ հաւատս քրիստոնէութեան , զոր ուսու-
ցանէ Հայաստանեայցս Առաքելական սուրբ Ե-
կեղեցի , ընկալեալ ի սրբազանից Առաքելոցն
մերոց ի Թագէտօս և ի Բարդուղիմեայ , և ի
բազմաչարար Հօրէն սրբոյն Գրիգորէ Լուսաւոր-
չայն եկեղեցւոյս , և յայլոց երանաշնորհ Հարց :

Արդ՝ նախասկիզբն չարեաց սատանայ տեսա-
նելով թէ յայսքան միջոցս անզօր հանդիսանան
բիւրապիտի խաբէութիւնք իւր և գծոխային
եղեռնագործ չարութիւնք ի յաղթահարելոյն
փոքր հօտիս , և տակաւին անվկանդ արձանա-
նայ ի հայրենի սուրբ կրօնի եկեղեցւոյ իւրոյ ,
զայլ իմն ամենաչար հնարս ի մէջ առ , որպէսզի
պատրուակաւ քրիստոնէութեան յորոգայթ իւր
արկցէ , որպէս ի սկզբանէ հաստատութեան
ընդհանուր քրիստոսական եկեղեցւոյ ի ձեռն
անօրէն հերձուածողաց և հերետիկոսաց բազում
միջոցօք փորձ փորձեաց գրգռեցուցանել զայն
ի սուրբ հաւատոց , և նօքօք բազմատանջ ալէ-
կոծեալ ծփեցաւ եկեղեցին , այլ նաւապետն
Յիսուս զերծ և անվտանգ պահեաց զնա ի սա-
տանայական ծփանացն : Այսպիսի հնարս և չարն
այն հնարեաց վասն փոքու հօտիս , զի այն ինչ
յաջողեալ զգարուատ նորազանդ բողոքական
քարոզչաց աստ , որք մտաւ գործեալ ի վիճակս

այն զի՝ 2 քահանայք զգետաւորեալք յալմէ և
յահելէ , 2 ուրարակիր սարկաւազունք բուր-
վառք 'ի ձեռս խնկարկեալք , 2 և ջահակալք
վառեալք յայս և յայնկոյս սրբազան պատա-
րագչին . յերկու առաջս բաժանեալք 'ի հանդի-
պոյ խնկարկութեամբ՝ երգօք և եղանակօք
զարաց և սարկաւագաց , ելեալ 'ի դրանէ հիւ-
սիսային կողման ընդ դուլիթ ներքին պարսպի
եկեղեցւոյն շուրջ , յաճեալ ընդ դուռն արեւել-
եան «Յարութեան» անուանեալ , մտին 'ի տա-
ճարն սուրբ յանդիման սրբոյ սեղանոյն . ուրա-
նօր 'ի յատենի լուսցումն կատարեալ , նոյնպէս
և յերկու առաջս բաժանմամբ վայելուչ իմն
եկին 'ի սեղան անդր մի յայս և միւս յայն կողմն
աստիճանաց , ուր 'ի ծուռկս անկեալ սրբազան
պատարագչին բազիլատարած զսուրբ աղօթան
մատուցանէր առ Աստուած , և դպիրքն 'ի խո-
նարհ զքնարեայն՝ եղանակէին քաղցր ձայնիւ :

Այսպէս և ոչ սակաւ էր զարմացումն եկեղե-
ցացեաց անդր խոռոն բազմութեան ընդ հան-
դիսաւոր վերաբերումն ահաւոր սրբոյ խորհր-
դոյն , որ վայրաբերեալ 'ի սեղանոյ անտի չքով
մեծաւ և երգօք վայելչականօք քաղցրաճայն
ներդաշնակողաց շուրջ զատենիւն պար առեալ
'ի հիւսիսայ ընդ հարաւն ելեալ յաստիճան 'ի
սեղանն անդրէն յաստիճանին սրբութեան բազ-
մեալ , առ որ հայեցողացն սիրտ և հոգի միահա-
ղոյն ոչ սակաւ գրաւեալ 'ի ջերմեռանդն աղօթս
և 'ի գոհութիւնս որ առ Աստուած :

Ի ժամ տէրունեան աղօթից սրբոյ խորհրդոյն
կատարեցան և վայելչապէս հանդէսք օրհնու-
թեան խաղողոյ : Յաւարտ սրբոյ պատարագին
ընթերցեալ եղև հրատարակաւ թուղթ իմն չը-
նորհակալութեան և շնորհաւորութեան 'ի գի-
մաց մերազնէից մայրաքաղաքիս , զոր յարգելի
եկեղեցական պարոն Թովմաս Մելքունեան՝ իբր
'ի կողմանէ ամենեցուն մատոյց , որոյ իմաստն էր
նախ՝ գոհութիւն առ վեհափառ Հայրապետն
Տ . Տ . Գեորգի . Կաթողիկոս ամենայն Հայոց , և
ապա՝ շնորհաւորութիւն դարստեան Նորին Ս .
Առաջնորդի , որպէս և զօրինակ նորա 'ի սմա
ճրարեմ 'ի հրատարակումն :

Յաւարտ շնորհակալութիւնս յատեն խա-
ղացեալ Նորին Սրբազնութեան խօսեցաւ բանս
ինչ սրտառուչ , թէպէտև հակիրճս , սակս եր-
կարութեան ժամանակին 'ի տօթեպիւն եղանակի
քաղաքիս , այլ ազգու իմն իմաստիւք , նախ 'ի
գիմաց Հայրապետին , որ իբրև Հայր բազմազ-
որով զմտաւ ածեալ հանապազ զամենայն զհո-
գևոր որդեակս իւր հարազատ , թէպէտ և կարի
տարանջատս յինքնէ , տածեալ խնամէ և գար-
մանէ զամենեսեան , ոչ թողով 'ի նոցանէ 'ի
բաց առ 'ի ջամբել զսուրբ կաթն ուղղափառ
վարդապետութեան Մօրս մեր լուսոյ Հայաստան-
եայց կաթողիկէ սրբոյ Էլմիածնի , և եթէ ոչ
անձամբ՝ գէթ և 'ի պատկերի միոյ յեպիսկոպո-
սաց իւրոց ելանէ 'ի յայց ամենայն հօտի իւ-
րում , և 'ի գէմն նոցին պատկերանայ իբրև նոյն

խաբեպատիր հնարիւք ջանան քեցել զորդիս ի
գրկաց Մօրս մերոյ Հայաստանեայցս սուրբ եկե-
ղեցւոյ և թակարդեւ զնոսա ի մուր վարդապե-
տութիւն իւրեանց և յազանդ կրօնին Լուտե-
րականութեան և կաթողիկոսականութեան : քանզի
թէ՛ աստ ի նոր Զուղայ , թէ՛ ի Թէհրան , և թէ՛
ի Համադան բազմացեալ նոցա՝ ջանան խաբել
զպարզամիտս կամ զչքաւորս , տալով զգրամա-
յան օգնութիւնս և իբր ողորմելով տառապե-
լութեան նոցա , որով և որսան ի հաղքս իւրեանց-
և այսպէս կուտեալ ի ժողովարանս ուսուցանեն
նոցա զմուրամիտ վարդապետութիւնս հակա-
ռակ սուրբ կրօնի մերում . և ոչ այսու շատաց-
եալ այլև բանան վարժատունս , և զանմեղ
մտկունս ազգիս , մանաւանդ ազքատաց մու-
ճանեն անդր և հազարով զպէտս ապրուստի նո-
ցա , ուսուցանեն նոցա ոչ թէ զլեզուագիտու-
թիւնս կամ զպիտանի ուսմունս , այլ զազանդ
իւրեանց , թէև երևութապէս ցուցանեն ծնողաց
նոցա իբր թէ ուսումն պարգևեն :

Աս ի Զուղայ մի ի նոցանէ Բրուս կոչեցեալ
քարոզիչ բողոքականութեան ի 1870 թուոյն
սկսեալ , ի ժամանակս սաստիկ սովուն մեծաքա-
նակ գումարս բերեալ թէ՛ յընկերութենէ իւր-
եանց և թէ՛ յերկրպագւոց բաժանէր աստ աղ-
քատաց . և զայս ողորմութիւն և գործ՝ զոր առ-
նէր զամենայն նպատակաւ իւրացուցանելոյ
զժողովորդս տեղոյս , որպէս և բացեալէ աստ՝
գարոց մի , յորս գումարս մեծ ծախելով և վար-
ձելով զվարժապետս Անդրիերէնագէտս , Պար-

ինքն առ ամենեսեան , և իբրև 'ի ժողոյ հոյ-
րագութ սիրով ընդ հովանեալ իւրով հովան
և հանդուցանէ զնոսա . ապա կնքէ և զբան իւր
իւրով շնորհակալութեամբ օրհնելով զամենե-
եան և յանկուցանելով զսէր և զհամակրութիւն
ամենեցուն առ ինքն :

Հուսկ յետոյ աւարտի ամենայն և արձակ
ամենեքեան իբրև 'ի մետասաներորդ ժամ
առուն իւրաքանչիւրք 'ի բնակութիւն :

Իսկ արդ պարսպի Նորին Սրբազնութիւնս
յայցելութիւն պատուեալ մերազնէից աստ , և
ընդունի զընդունելութիւնս 'ի նոցանէ սիր-
հրաւեր մեծարանօք , այցելու հանդիսանայ
մարդասիրական ճեմարանն Հայոց , ուր և ձե-
ռախօսութիւն լինի յաշակերտաց , ըննէ զման-
կունսն 'ի յընթերցանելիան և 'ի շարագրու-
սքն , խրախուսէ և յորդորէ զնոսին յամենայն
փութաջան լինել 'ի յիմացական և 'ի բարոյ-
կան ուսմունս , լինել օրինաւոր անդամ աղ-
և եկեղեցւոյ , հետամուտ լինի 'ի կառավար-
ութիւնս հոգարարձուաց , կազդուրէ և յորդ-
զնոսա յես առաւել եռանդն ժրութեան , և
օրհնութեամբ շահէ զնոսին , այցելու նաև զը-
տանի յայլ դպրոցս Լատինացւոց և Անգլիաց-
ւոց և 'ի յպարանս նոցին , ևս և եպիսկոպոսոց
նոցա , և ընդունի 'ի նոցուց զյարգանս մեծ-
րանաց 'ի շուք և 'ի սլորձանս մեր և ազգի :

Շատ լիցի ցայս վայր գրեալ 'ի հրատարակու-
թիւնս պատուական լրագրոյդ , մինչև զհետոս
գայս յայսմ հետէ անդրէն ունիմ հաղորդել
ձերում պատուելութեան :

Խոնարհ ծառայ ,
Կարապետ Մարգարեան Մ . Դաւթեան :

Ահաւասիկ շնորհաւորութեան թղթոյն օրի-
նակն , զորմէ յիշատակութիւն եղեալ է 'ի նա-
խնթաց նամակի :

Շնորհաբեր եկաւորութիւն ձեր 'ի մայրաքա-
ղաքս կարկառայ , ոչ Առաքելաշնորհ սրբազան
Հայր , 'ի տես և յայցելութիւն բանաւոր հօտի
ձերում , մերազնեայ հասարակութեանս բնակել-
լոյ աստ , ապաքէն մեծի իմն ինքութեան ար-
ժանի արար զմեզ զամենեսեան . այն զի՝ զբազ-
մաճամանակեայ հետէ զցանկալին զայն հոգեւոյ
'ի Հարց պատմեալ և արդ առ որդիս վճարեալ
զգերա . Առաջնորդ մեր տեսանեմք այսօր ակն
յանդիման ընդ յարկաւ սրբոյ տաճարիս բազ-
մեալ 'ի սեղան սրբութեան , որ զանման
զանմահարարն մատուցանէր զսուրբ պատարագ
'ի սրբութիւն և 'ի միթարողութիւն հօտին իւ-
րոյ , և 'ի միացումն հաղորդակցութեան զին-
ուորեալ եկեղեցւոյս 'ի խորհրդական զլուր
տէրն մեր Յիսուս Գրիստոս :

Յուշ ածեմք ամենեքեան աստանօր 'ի սիրտ
և 'ի բարբառ զտէրունեանն սիրայի ձայն առ

սիացիս և այլն , ուսուցանէ նոցա առաւել զիբն
իւր՝ թէև ծնողք նոցա՝ այսինքն մանկանց , կար-
ծեն թէ զԱնդրիերէն և այլ լեզուս վարժեցու-
ցանեն , զի բազումք այն են , որ յեռանդն ու-
սումնասիրութեան բորբոքեալ տան ևս անդա-
նօր զզաւակունս ի յուսումն վարժից և լեզուա-
գիտութեանս ի դպրոցս այս մինչ ցարդ ուսուց-
եալ են Հայ ուսուցիչք ողջամիտք զքրիստոնէա-
կանութիւնս Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ
բայց ի նորոյ լսեմք թէ՛ նոյն արբանեակք բու-
ղբականութեան խստիւ արգելեալ են չվարժել
զնոսա նոյն քրիստոնէականութեամբ , այլ իւր-
եանց վարդապետութեամբ . Տեսեք , վեհափառ
Տէր , թէ որպէս ողորմելի է վիճակ Զուղայու ,
և յոր աստիճան հոգևոր արտմութեան համակ-
եալ սիրտք ճշմարիտ ազգասիրաց , և մանաւանդ
կղերցս հոգևորականաց . զի ի մի կուսէ դա-
տարկաձեռնութիւն ամենեցուն կաշկանդեալ
կապէ զձեռս՝ գրամական նպատիւք յօգն հա-
սանել աղետիցս , որով թշնամին հաւատոյս
գործէ զամենայն գործս զայս , և զլծոյն դառ-
նութեան իւրոյ համաճարակ տարածէ . և ի
միւս կուսէ՝ զի տեսանեմք այսպէս օր ըստ օրն
խելել ի ծոցոյ սուրբ եկեղեցւոյս զհարազատ որ-
դիւս նորա , և ի գայթս ազանդաւորութեան
իւրեանց տղմաթաթաւ շաղախեալ զպարզամիտս
և զանմեղ մանկունս : Բրուսն այն միջոցօք ինչ
յառաջ՝ գնացեալ է յերկրպա . և որպէս լսեմք
վասն հանգանակելոյ անտի ևս մեծ գումարս զի
նովաւ վերադարձեալ ևս առաւել զխորամանկ

սիրելի աշակերտան աւետարանեալ, թէ յոր տուն մտանայիցէք տասնիցէ ողջոյն տանս այսմիկ . զոր բան աւտարիկ հետեւարար 'ի ձեզ եկեալ հասեալ վայելեմք այսօր բարեբաղդարար . իբրև 'ի բերանոյ Հօր քաղցրարարոյի լուեալ 'ի մօտոյ աւանջօք , և 'ի ձեռնսն Տեառն բարեխնա 'ի առնկարեալ ըզձանօք . հոմբուրիս սրբոյ Օծութեան Չերոյ փառաւորիմք :

Եւ իցէ, իցէ արդեօք առաւել ինչ արժանի բերկրանաց , քան երկնային ոք վայելացեալ շնորհաց և Աստուածապարզեւ օրհնութեան , որպիսի դարդիս 'ի ժամուս վայելեմք մեք 'ի նոյն 'ի ձեզ դաւանդ սիրոյ և շնորհաց Աստուածայինն օրհնութեան , 'ի բանն թէ շնորհաց ողջոյնն ձեր 'ի վերայ նոցա' : Մեք ահա՛ որդիք ձեր հոգեկանք , մեք ահա՛ և հարազատ սերունդք Մօրն մեր լուսոյ Հայաստանեայց կաթողիկէ սրբոյ Էլմիածնի :

Հապա՛ և մեք նախ դառնալինս այսօր , ո՛ գերատիճանեալ Հայր , միակամ և միաբան հաճութեամբ նուիրեմք զանկիղծ սիրոյ գոհունակութիւնս առ վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց տէր Գեորգ Դ . ծայրագոյն Պատրիարք և կաթողիկոս Արարատեան մայր աթոռոյ սրբոյ Էլմիածնի , որ քաղցր ակնարկութեամբ իւրով բարեհաճեցաւ առաքել առ մեզ զհովիւր բարեխնամ 'ի յայցել մեզ և 'ի մխիթարել զմեզ ըստ հոգւոյ :

Հուսկ ապա և յարգական սիրով շնորհաւորեմք այսօր զցանկալի գալուստ ձեր 'ի յայցելութիւն մերում հասարակութեան : Խաղաղութիւն է մուտ ձեր , խաղաղասէրդ եկեղեցւոյ Տեառն բարձրելոյ , ահա հօտ ձեր ցանկալի , ահա ժողովուրդ ձեր կազմեալ , վայելեալիք արդարեմն 'ի սէր հարազատաց հոգեւոր որդւոց , և ցողեալիք 'ի դուրս զցօղ շնորհաց օրհնութեան մերոյ : Եւ ձեզ ահա ժամ բարեպատեհ , ո՛ հոգեւոր Հայր , բնդ առատաղեղ օրհնութեան ձերոյ՝ յանկուցանել 'ի ձեզ զսիրտս և զհամակրութիւն սեռն սիրոյ սոցին այսոցիկ հոգեծին որդւոց Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ 'ի խոկմունս հոգեւնպաստ խորհրդոց 'ի վառս տաճարին Աստուծոյ և 'ի պարծանս աղգի :

Կեցցէ՛ ուրեմն հոգեւոր Հայրդ մեր , կեցցէ՛ և բարեխնամ Հովիւրդ մեր բնդ բանաւոր հօտի ձերում 'ի ծոց Մօրս մերոյ Հայաստանեայց եկեղեցւոյ անսասան բնդ . յամայր ամն ամենայն առնողաւծովք բարեաց 'ի յառաջնորդել անսայթաք 'ի ձեզ յանձնեալ հօտն փրիստոսի :

Հնարաղիտութիւն իւր ի գործ դիցէ , և մեծմեծս գործեսցէ . և որպէս ունի մտադրութի մինչ անգամ հնարել , զի վերացսի աստի Հայու թիւն և Եկեղեցի մեր . վասնորոյ աղաչեմք զերեսս վեհափառ Օծելութեան Չերոյ , յետ տեղեկանալոյ ձեր թէ գրովս և թէ ինդրագրով հասարակութեան տեղւոյ՝ որպէս և անշուշտ գերա . տէր Գրիգորիս արքեպիսկոպոս Առաջնորդն մեր ևս տուեալ իցէ ծանօթս զայսցանէ , առնել բարեհաճեալիք փութով զկարեւոր անօրհնութիւն ինչ վասն այր , զի մի ի դառնալն նորա աստ՝ ևս առաւել հոգեւոր վնաս նորա տարածեցի ի ժողովրդ ականս տեղւոյս , որպէս և Համադրանաբնա՛ Հայք միանգամայն որս եղեալ են այնպիսեաց . զորմէ քահանայք տեղւոյն զրեալ էին , և խնդրեալ էին առաքել աստի կարծապետս , զի բացեալ ինքեանք ևս վարձատունս կրթեցեն զմանկունս և չթողուցուն նոցա յաճախել ի գարոցս բողբոսկանաց :

Այո՛ , վեհափառ Տէր , այս է միակ հնար գիւմարութեան նոցա վարժարանօք միայն կարեմք խափանել զյառաջնաղաչութիւնն նոցա և այն պարտի լինել օրինաւոր և բաւականին գումարօք : Յայս եռանդն վառեալ և մեր 'ի 15 Յունվարի 1875 թիւ Յայտարարականաւ մերով , յայտնեցաք հասարակութեան տեղւոյս , զխոստումն մեր 4200 հօռուվեաց գումարս նուիրել ի մէնջ ի հաստատութիւն ազգային ուսումնարանի միոյ աստ ի Զուլա , և հետեւապէս կտակաւ ևս թողուլ նոյն ուսումնարանին զամենայն այլ գոյս և գտացուածս մեր , որպէս և յանձն առաք հան-

Հաճեալիք արդ՛ ո՛ սրբազան Հայր , զայս թուղթ մեր՝ գուզնաքեայ թէպէտ , այլ անկեղծ սիրոյ և հաւատարմութեան պատուեալ Հայ հասարակութեան քաղաքիս՝ ընդունել 'ի հաճոյս , զոր հաճութեամբ յարգելի աւանդապահաց և գործակարաց պայտօնակցաց իմաց , խորին տխրածութեամբ և մեծարանօք ահա ձեզ մատուցանեմ 'ի դիմաց ամենեցուն :

Չերում բարձր սրբազնութեան խոնարհ ծառայ ,
(Տեղի կնքոյ) (ձեռն) Թովմաս Մէրոսմեան
Եկեղեցւոյս կալիաթու եւ Չիբրու սրբոց
Եկեղեցեացն Հայոց : Եւ գործակալ Ամե-
նափրկչեան սրբոյ վանացն Լորչուպոյ :

Թիֆլիսի ՄՇԱԿ Լրագրոյն Սեպտ. 25 թիւէն ծաղկաքաղ ընելով կըհաղորդեմք մեր ընթերցողաց հետեւեալ տեղեկութիւնքն 'ի վերայ այոց բնակելոց իսպահանի նահոնդին մէջ : Այս նահանգն՝ նախքան զտոյն 1871—1872 ամաց , ունէր 2505 Հայոց տուն և 17,870 ժողովուրդ . բայց տարակոյս չկայ թէ նոյն ամաց սոսկալի սոյն ոչ սակաւ պակեցուցած պիտի լինի ըզյիշեալ թիւն Հայոց :

Նորջուղայի մէջ , որ իսպահանի արուարձանն է , 371 Հայոց տուն և 2546 Հայ բնակիչք կըգտնուին : Ժամանակաւ , երբ Հայք բազմաթիւ էին , Նորջուղան 20 եկեղեցի ունէր . բայց այժմ միայն 7 եկեղեցի , 2 վանք և 3 դպրոց ունի : Առաջինն՝ Հայկական Հայրենասիրական վարժարանն է . հիմնեալ յամին 1843 արդեամբք և ծախիւք կալիաթայու պարոնաց Յարութիւն Արգարեանի և Յովհաննէան էլիագեանի . որոց օժանդակութեամբ մինչև ցայսօր 70 աշակերտք կըլրթուին յիշեալ հաստատութեան մէջ :

Երկրորդն է Ամենափրկչեան վարժարանն , կանգնեալ յամին 1852 արդեամբք և ծախիւք երկու ազգասէր փրցի՝ 'ի Պաղատիս բնակելոց , որք են տիկին Մարիամ Յարութիւնեան և օրիորդ Թագուհի Մանուկեան . որոց օժանդակութեամբ կըկառավարուի մինչև ցայսօր յիշեալ դպրոցն , ուր 40ի չափ աշակերտք կըգտնուին : Երրորդն է Ս . Մինասայ դպրոցն . որոյ հիմնադիրն է պարոն Մարգար Սուքիասեան , որ բընակի 'ի Զափարա քաղաքն ճափա կղզւոյն : Այս դպրոցին աշակերտաց թիւն 80ի կըհասնի :

Բաց յայս երկը դպրոցաց , որք արու տղայոց յատկացեալ են , աղջկանց համար ևս սուրբ կատարինէի վանուց կուսանոցին մէջ վարժարան մի հաստատեալ է ազգասիրական խնամօք և

գանակել յազգայնոց տեղւոյս և Հնդկաստանի զինքնակամ նուէրս յանուն նոյն ուսումնարանին : Զայս խոստումն մեր կատարեցաք յետոյ , զի զնոյն 4200 ուսիկսն՝ որ լինի Պարսից զուանս 10080 , յանձնեցաք հոգաբարձուաց յիշեալ առաջադրեալ ուսումնարանին , առաքել ի կալիաթա և ապահովել ի ներքոյ դրամաթղթոց Անդղոյ տէրութեան , զի տոկոսիքն եկեացէ ամ ըստ ամէ ի ծախս նոյն ուսումնարանին . հանգանակեցաք ի Զուլայեցւոց ևս զգումարն իբր 4000 Պարսից զուանեաց , զորս և նմանապէս յանձնեցաք նոյն հոգաբարձութեան առաքել ևս ի կալիաթա և ապահովել . և այն ինչ մինչ պատրաստեաք յուղի անկանել առ 'ի Հնդկիս ի ժողովարարութիւն նուիրաց հրամանսու գերապատիւ Գրիգորիս Արքեպիսկոպոս Առաջնորդիս , և ահա եհաս բարձրագոյն կոնդակ վեհափառութեան ձերոյ և որով ուղի որեցաւ Նորին Գերապատուութիւնն ի Հնդկիս ի 21 Մայիսի անցեալ ամսոյ , և այսպէս մնաց նոյն գործ խափանեալ : Ուստի յայտնելով զայս ամենայն ի սպաս սրբազնագոյն Տէրութեան Չերոյ և համառօտիւ ցուցանելով զպատրաստեալ վտոնդն՝ աղաչեմք օր մի յառաջ հոգալ զայնմանէ և ըզհարկաւոր անօրհնութիւն Չեր առնել , զի մի ժողովուրդ մեր մատնեցին ի լարեալ ծուղակս թշնամեաց և որս եղիցին խորամանկութեանց : Ապաքէն են աստ մեզ և քանի դպրոցք(1) կա-

(1) Զաւայի ե որ՝ նոյն դպրոցներք միացնելով՝ մի նշանաւոր գումար գոյացնել եւ աւելի նշանաւոր եւ

ծախիւք պարոն Մանուկի Որդանանեան , վասն զեմի ազնիւ բարեկամին մերոյ 'ի Պաղատիս բնակելոյ : Այս հայրենասէր պատուական անձնամօք յառաջ , տպագրութեան հայերէն տառեր և մամուլ մի Եւրոպայէն բերել տալով յուղարկեաց 'ի Նորջուղա 'ի նուէր Ամենափրկչ . վանուց : Ինչպէս կըտեսնուի , Հնդկաստանի գաղթական էրեւելի Հայք , բրնց հայրենեաց այսինքն Նորջուղայի յառաջադիմութեան և լուսաւորութեան համար 'ի սկզբանէ անտի խնամատարութիւն ունեցած են և ունին միշտ . բայց ինչ ս գուտ երբ զանազան ձախորդ պարագայք արգելք լինին դժբաղդ ժողովրդեան մի զարգացման : Այս արգելքն վերցնելու համար՝ ամեն հնարաւոր ջանքն 'ի գործ դնելէ 'ի զատ , հարկ է վերին նախախնամութեան այցելութիւնն ևս խնդրել . քանզի եթէ ոչ շինէ Տէր զտուն , 'ի նանիր վաստակին շինողք նորա' :

Ըստ խնդրոյ միոյ 'ի բարեկամաց մերոց ճափալու (որ 'ի Հնդկաստան) , պարտ անձին համարիմք հրատարակել զհետեւեալ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Յարգոյ խմբագիր ,

Յամի Տեառն 1868 , պարոն Աբրահամ տէր Աւետ մահտեսի Յովհաննէս Եղիազարեանց քեռայր իմ , որ վարէր յայնժամ պայտօն 'ի հեռագրատան իսպահանայ , գտանէ պատուէր 'ի Թէհրանայ 'ի Հայ վաճառականէ ումեմնէ և լընտանուոյ իւրմէ՛ գնել և առաքել նմա ապրանս և փոխանակ արժէից ապրանսն քարչել փոխանակաղիր 'ի վերայ իւր : Պարոն Աբրահամ կատարէ զպատուէր վաճառականին Թէհրանայ որ՝ որպէս ասենն , գրեալէ 'ի փոխանակաղիրն զընդունելութիւն իւր . այլ նախքան զլուսն պայմանաժամուն հատուցման սնանկացեալ , չկարէ պատուել զայն : Չփոխանակաղիրն յետառաքեն յիսպահան , և պարոն Աբրահամ լուեալ զի կառավարութիւն Պարսից՝ յորոյ գանձատանէն ընկալեալ էր զգումարն՝ յիւրմէ պահանջեցէ զգումարն , մեկնի յիսպահանայ գնալ 'ի Թէհրան : Յետ այնորիկ լսեն ընտանիք նորա թէ հասեալ է նա 'ի Թէհրան . բայց և անտի ելանէ անլուր : Սակայն մինչև ցայսօր չգիտեն թէ ո՛ր իցէ նա , կամ զինչ պատահեալ է նմա : Արդ՝ քանզի այլ ամենայն ջանք մեր վասն գտանելոյ լուր ինչ զմանն 'ի դերև ելին , խնդրեմ զի շնորհ արարեալ հրատարակեալիք զմանն յայտարհածանօթ Արշէլս լրագրի ձերում . թերևս ոմանք 'ի մարգասէր ընթերցողաց ձե-

ռուցեալք ի հայրենասիրաց Հնդկահայոց ոմանց , որպէս և հանգանակեալ գումարն բնդ նուիրելոցն ի մէնջ ծառայեն յայն պէտս . այլ համեմատելով ընդծախեալ գումարս բողբոսկանաց ոչինչ լինի . վասնորոյ պէտք են բաւականին դրամոց , զի միացեալ բնդ վերոյիշեալ գումարն՝ հաստատեսցի օրինաւոր և հաստատուն ուսումնարան բարձրագոյն ուսմանց և լեզուագիտութեանց ի դիմադրութիւն թշնամեացն . և այս հոգացողութեան սպասեմք ի վեհիդ սնօրէնութենէ :

Երարեցաք ի սմին զմի օրինակս ի Յայտարարականէն մերմէ և զցուցակս հանգանակեալ գումարաց յանուն նոյն առաջադրեալ աղգային ուսումնարանին ի գիտութիւն վեհափառութեան Չերոյ , զոր ապա խնդրեմք յանձնել խմբագրութեան ԱՐԱՐԱՏ պատուական ամսագրոյ սրբոյ Էլմիածնի՝ և հրամայել նոցա հրատարակել յէջն այնր ամսագրոյ ի տեղեկութիւն ազգայնոց և ի քաջալերութիւն նուիրողաց այնց գումարաց , գոհ լիցուք :

Ըստ առարկայիցն նոյն ուսումնարան կազմել աւելի օգտաւետ լինելով , սակայն բարեբարաց միաբանութիւնն չէ յաջողած եւ ցարգ ամենն եւս ցրտած վիճակի մէջ մնացած են :—Սոցա մէջ հզանաւոր տեղ ունի եւ կարող է առաւել արդիւնաւոր լինել Ծաղիկ Խարուհի հիմնած դպրոցն :

Լըյուսամբ որ գերա . Առաջնորդն ի Հնդկաստան անձամբ կըյաջողի մի համաձայնութիւն գոյացնել եւ դպրոցներք գննէ երկու մասի վերածելով՝ բարեյոյս կարգադրութիւն անել :

Մ. Խ. Արարատայ

ՆՆԻՇԵԱԼՆ

րոց գիտիցեն ինչ զյիշեալ պարսն Արարհամէ և կամիցին հարորդել ինձ զայն : Եւ ես խոստանամ, զի որ ոք յայտնեսցէ զհաւաստի իմն լուր զի նախանութենէ կամ զմահուանէ նորա, բաց ի բազում շնորհակալեաց, ընկալցի յինէն նաև արժանի պարգև մի :

Բուխինգ (Ճափ) 8 Մարտի 1875 : Գաղապար տեք Գալստանեան :

Մեղս-Հայաստանի լրագրոյն Սեպտեմբերի 27 թուոյն մէջ հետեւեալ պարբերութիւնն ընթեռնուածք, որ նշանակութեան արժանի է, իբրև հաստատութիւն Արշալույս 1022 թուոյն մէջ հրատարակեալ մեր համառօտ դիտողութեանն ի մասին արժաւ խորէն վարդապետ Ստեփանէի : «Մասիսում վերջին անգամ շարունակ մի քանի համարներում տպած է չափազանց գովասանական նամակ Շուշիից խորէն վարդապետ Ստեփանէի մասին : Այդ նամակները ոճը մեզ յիշեցնում է հին «Հայկական Աշխարհը», որի խմբագիրն էր խորէն վարդապետ Ստեփանէն՝ աշխարհական ժամանակ» :

Եթէ չեմք սխալիր, Մեղս-Հայաստանի լրագիրն պարզապէս կամի ասել թէ Մասիս մէջ հրատարակեալ դովասանական նամակն նոյն իսկ խորէն վարդապետ Ստեփանէին շարադրութիւնն է ընդ կեղծ ստորագրութեք «Ճ. Բ. Շուշիցի» :

Յ. Պօլսոյ մէջ յամսոց հետէ հրատարակեալ Միջոց անուն զաւելտական ազգային հանդիպին քանի մը թերթերն ձեռքեռնին անցան, և կըտեսնեմք թէ նորա հանձարեղ խմբագիրն՝ շատ անգամ հայերէն և երբեմն թուրքերէն լեզուաւ, կայխատի բարոյական խրատներ տալ հասարակութեան նորա պակասութիւնքն և զանազան մտլութիւնքն ներկայացնելով ծաղրական զուարճալի կերպիւ :

Այսպիսի զաւելտական թերթի մը ընթերցումն օգտակար կըթուի մեզ բոլոր ազգայնոց համար ամենայն ուրեք. վասնորոյ կըյորդորեմք զհասարակութիւնն Չմիւսնոյ ինչպէս և ամին հայաբնակ քաղաքաց՝ նպաստամատոյց լինել յիշեալ ազգային հանդիպին՝ բաժանորդ գրուելով այնմ մի քանի օրինակաց համար :

Միջոցը շաբաթը երկու անգամ կըհրատարակուի և նորա տարեկան արժէքն 100 ղն է : Յիշեալ թերթին 11երորդ թուոյն մէջ հետեւեալն կընթեռնուածք.

Ոմանք մեզ կըհարցնեն թէ ինչու համար ազգային խնդրոց վրայ լուրեր չեմք հրատարակեր : Նախ հրատարակութեան արժանի լուր մը առած չունիմք որ սամք. մեր բոլոր ազգային պաշտօնակցաց գրածները արդէն նոր բաներ չեն, գրեթէ միշտ առջի օրուան կրկնութիւններն են. երկրորդ մենք ուրիշներու պէս երէկ ընդհանուր ժողովը ծին բացուեցաւ և 10ին գոյուեցաւ թ պէս լուրեր հրատարակելէ, Ազգին մեծ շահ մը չեմք յուսար : Ըսել չեմք ուզեր թէ ընդհանուր ժողովը գործ տեսած չունի, կամ ժողովին մէջ ինչ ինչ խնդրոց վրայ վիճաբանութիւններ չեն ըլլար. ժողովին մէջ ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր, Ռուսինեան էֆէնտի կատենարանէ, Պէկեան էֆէնտի կըվիճաբանէ և Օղսէն էֆէնտի կըտրամաբանէ. վերջապէս սա ըսել կուզեմք որ առայժմ երեսփոխանք կըխորհրդակցին թէ ինչ գործ տեսնենք. ուստի երբոր իրօք մէկ գործ մը լըմնցունեն, այն ատեն մենք ալ մեր ընթերցողաց կ'ըմնցնեմք :

Իսկ եթէ Ազգին վիճակին վրայ տեղեկութիւն կուզեն. առայժմ սա չափը միայն կրնամք ըսել որ Ազգին վարչական ընթացքը՝ «Մամուլի Մամուլի» ուր կերթաս, երուսաղէմ ժամ կերթամ» ի գիրքին մէջն է :

ՁԱՆԱԾԱՆ ԽՈՒՐԻՔ

Չմիւսնոյ, 48 Հոկտեմբեր : Մեր բարձրաւ վալին գրեթէ յերկուց շաբաթուց հետէ այցելութիւն կընէ իւր ինամոցն յանձնաւ վիլայէթին. ուստի շաբաթ մի Այտըն մնալով նոյն քաղաքին վարչական խորհուրդը :

ներն քննելէ և բարեկարգելէ ետև ՚ի Տէնդլի կըգտնուի այժմ, ուսկից քանի մը ուրիշ քաղաքաց ևս այցելութիւն պիտի ընէ :

—Քաղաքիս հասարակաց ապահովութիւնն՝ դժբաղդարար, խիստ ցաւալի վիճակի մէջ է, և գրեթէ անպակաս ոճրագործութիւնք, գողութիւնք և ուրիշ չարագործութիւնք կըպատահին. որոց վերայ ոստիկանութեան ծանր ուշադրութիւնն կըհրաւիրեմք :

—Քաղաքիս ազգային երկպառակութիւնն յայտն շաբաթու դժբաղդարար, ծանր կերպարան մի ընկալաւ. քանզի ՚ի խռովութիւն և ՚ի կռիւ վերածուեցաւ :

Կրտսէք թէ տեղական իշխանութիւնն խռովարարաց ոմանց երաշխաւորութիւնն առնելով, նոցա դասն զինի Պայրամի տեսնել որոշեր է :

Համազգի քաղաքակից եղբարց մէջ տեղի ունեցած այս ամենամախորդ կռիւն անշուշտ ցաւալի է յոյժ. որոյ ՚ի վերայ իրաւամբ կողբան ճշմարիտ ազգասէր և խաղաղասէր անձինք :

—Ազգասիրական ուրախութեամբ կ'ըմանամք թէ Աւստրոհունգարիոյ կայսրն բարեհաճեր է երկաթէ թագի կարգին առաջին աստիճանի շքանշանաւ պատուել զվսե. Տատեան Յարութի պէյն, որ արտաքին գործոց պաշտօնատան խորհրդական (միւլթէշար) է :

—Կեսարացի Հայ երիտասարդ մի՛ որ ՚ի քաղաքս կըգտնուի շաբաթէ մի հետէ, ձեռաց ուժոյ արաւքոյ կարգի այնպիսի ապացոյց մի կուտայ, որ անհաւատալի կերեւի. զի մի կամ երկու կրփահարութեամբ (եռմիւրուգով) կըկտարէ ո՛ր և է քար ՚ի զարմացումն տեսողաց :

—Հեռագիրն կըծանուցանէ թէ Անգղիոյ թագուհւոյն գահաժառանգ մեծ որդին՝ կալլէսի իշխանն ամուսնոյ 12ին հասեր է ՚ի Գահիրէ, ուր փառաւոր հանդիսիւ ընդունուեր է :

Նորին Բարձրութիւնն ընկերացեալ էր Եգիպտոսի գահաժառանգ իշխանէն, Նուպար փաշա և Մուստաֆա փաշա նախարարներէն, որք մինչև յԱղէքսանդրիա գնացեալ էին զՆորին արքայական Բարձրութիւնն ընդունելու համար :

—Անգղիոյ Պանքան հարիւրին 4ի բարձրացոյց իւր դրամադեղին (էսքոնթ) գինը :

—Կայսերական հրովարտակաւ, վսեմա. Մահմուտ Տամաթ փաշան վաճառականութեան տեսուչ անուանեցաւ փոխանակ վսեմա. Գապուլի փաշային, որ օսմանեան դեսպան կարգեցաւ ՚ի Բէղէքսպուրկ :

վսեմա. Սատքը փաշան, որ երբեմն ընդհանուր կառավարիչ էր Այտընի գաւառին, օսմանեան դեսպան անուանեցաւ ՚ի Փարիզ :

—Գերմանիոյ կայսրն ամուսնոյ 12ին Միլանէն մեկնեցաւ : Իտալիոյ թագաւորն և իւր բոլոր արքունիքն ընկերակից եղան Նորին վեհափառութեան մինչև ՚ի կայարանն երկաթուղւոյն :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բանակին արժէքն 372—370 զուրու է, և այս գիներով մեքենայով մնաքուած 1500 հակ բամպակ վաճառեցաւ :

Աֆիսը դիւրափաճաւ է և այս շարթու 80 կոլով ծախուեցաւ 145—152 զուրու չէքին : Փսլամուտին գինը՝ 75—115 զուրու չէքանուած ապրանքի համար. իսկ բանուածը կարժէ 107—125 ըստ տեսակին :

Ուխարի բուրգէն 500 կենդինար լուացուած ապրանք վաճառեցաւ 580ի կենդինարն : Քէօքօյայայէն 400 քուրձ վաճառեցաւ 123 զուրու չի կենդինարն :

ՊԵՆՍՅՈՒՐ

Չմիւսնոյ քարափանց (քէ) ընկերութիւնն իմաց կուտայ այն անձանց որք կըվախաքին դընել հողով լցուած իւր գետիններէն (արսա), թէ անոնցմէ ո՛ր և է վաճառում մի ընելէ ետև՝ կարող է տալ աւանդել գնողաց ՚ի ձեռնահաս իշխանութեանէ կարուածական վիլայադիր (հէօծճէթ), թէ Միւլք և թէ Վաքքէ : 2 Չմիւսնա, 23 Սեպ. (5 Հոկ.) 1875

Արուեստահնար օգտաշահ վեպ մըն է, գոր քաղղիայի քանաքայ մի յօրիներ է, խասի դատապարտելով վեղապարտ կրօնաորդներն և նոցա յանցանքն յիշեան հանելով, յօգուտ սուրբ կրօնի :

Մեծարգոյ Մ. Մամուրեան՝ մեր քաղաքակից գրագետը քարգմանած է զայն վիպասանութիւնն ՚ի նայերին աշխարհաբար լեզու. որ բաղկացեալ պիտի լինի ՚ի չորից հատորոց : Արդէն առաջին, երկրորդ և երրորդ հատորն ՚ի լուս ընծայեալ են ՚ի Տեառն տպարանի Չմիւսնոյ լցնքացս ներկայ 1875 ամին : Մնացեալ չորրորդ հատորն եւս ոչ անագան պիտի հրատարակուի :

Իւրաքանչիւր հատորոյն գինն 12 դոպոնդ է :

ՀԻՒԱՆԳԻՆ ԲԱՐԵՎԱՍԷ



ԴԵՂԱԶԱՏՔ ՀԱՂՈՍԻԷԻ ԶՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՔ

Մարդոս ջըզլին գրութեան (սփիւթ) շատ յոգած ըլլող սովակը ախտ մըն է և զի նորու ամենախորքիկ շարժումը կամ զոր գրութիւնը վշտալի է յոյժ. վասն զի ուր գտնուել է սոր դեղը : — Միակ դեղը այս է. քիչ լսե զինի, գարեջուր, և ողիկց ըմպելիք. և աւելի աղէկ կըլլայ որ բոլորովին հեռանաւ անոցմէ, և ամենին շինես. նմանապէս խաչմէ մի խմեր, և սուտեղ թեթեւ թեթեւ (շա) զոճ եղեր : Կարեւր էր ջանին շափէս քուր օդ ձե՛ն անն գիշեր իմ դեղահատերէս երբեք կամ չորս հատ քուր օդ ձե՛ն անն գիշեր (սու) զոճ եղեր : Կարեւր էր ջաննալը և շատ միս կեր և համեմունք (սու) հեռու կեցիք ՚ի թէ այս օգտակար կանանները ճշգրութեամբ ՚ի գործ դեղու ըլլա, մտքդ շուտով պիտի հանգստանայ, մարմինդ առողջ պիտի ըլլայ պիտի մտնաս թէ ջըջա շարժումն ունեցար :

ՆԱԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ ԵՐԻՎԱՆՈՅ

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութեանց մէջ թէ կըկարգուէր շափէս աւելի ըստինց կըլլան կամ բաւական չեն ըլլար, թէ բարը կամ աւաղ երկկաննց կը հասնին կամ թէ անոնց մէջ ցաւեր կը դոյանան մըջին համապատասխանած մտքը : Այս ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հուլիոսէի դեղահատերէն ամենու տակէն հրահանուց համեմունք և սորո պակասութեան քիչ երկկաննց վարի կողմ անկողն մտնելու ժամանակը : Այս դարման անմոջական օգնութիւն մի պիտի մատուցանէ, այնինչ որ ինչ դեղերը զուր տեղը գործածուած պիտի ըլլան :

ՍՍԱՄՈՒՄԻ ԱՐՈՒԻԼԸ

Ո՛ր և է դեղ մի չկրնար ստամբի զօրութիւնը նորոգել և աղէկանել զայն շուտով ՚ի նչպէս այս դեղահատերը. որոնք անգործ, խանութիւնէ կամ վատթար կերակուրէ պատճառաւ բոլոր թեթեւութեան կըվանեն և կը հասնին ՚ի լեարդ (հօր ֆէյլ) : Երան գործողութիւնը կը կարգողուն. զի նորու սաստիկ նոյն (սփիւթ) դեպքերու մէջ քանչեւ ներգործութիւն մի ունի և լինու ու ստամբի ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ :

ԲՈՐՐՈՒՄՆ ԹՈՒՔԱՌԱՋԻՑ (ԴՐՈՆԷՒՐ) ՀԱՁ ԵՆ ՀԱՐՐՈՒԼԻ

Հնչաւութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութեանց ամեն ախտէն աւելի յանախ կը պատահի և երբեմն աւելի վատ գաւոր է : Ասոնց գործողութեանց անկարգ ընթացքին առաջինը շաններ կրնան միշտ կարգադրուի Հուլիոսէի հոշակարգ դեղահատի միջոցաւ : Ասոնք շուտով կը գարմանան արեան ո՛ր և է ստամբանակցայ անարգութիւնը, կըթեթեան խցուած շնչափութիւնը, կը բարեխանեն շնչափողին ու թոքերուն դիւրութեամբ ու խոտնորասպէս բարձրու : Այս դեղահատերը՝ իրենց մաքրող զօրութեամբ կը սրեն արիւնը ամեն աղտոտութիւններէն, և այս եղանակաւ կըզօրացնեն զգրութիւնը (սփիւթ) ընդդէմ միւրիպի պիտի շնչարգելութեան, և ուրիշ թոքային տկարութեանց :

ՏՎԱՐՍԵԱԼ ՄԱՐԳՎԱՅԵՆ ԲԱՎԱՏՈՒԹԻՒՆՔ

Տկարութեան, թուլութեան և ջըջաւութեան դեպքերու մէջ, որոնք ո՛ր և է բնական կամ գերբնական չափազանցութեան պատճառով են, այս դեղահատից այլովիչ և նորոգիչ ներգործողութիւնը մեծապէս օգտակար է. քանզի մարտոտութիւնը կըվեճահաստատուէ, մարմնոյն ամեն հիւթոց թափումը կը կանխուարի, ընդդէմ կըզօրացնէ, հիւանդին միտքը կը յարդարէ և վերջապէս առողջութիւնը ձեռք կը բերէ :

Հուլիոսէի դեղահատերը ամենէն օգտակար դեղերն են իստեալ հիւանդութեանց համար :

Table with 3 columns listing various ailments and their treatments. Columns include ailment name, treatment name, and reference to the medicine.

Ի միւրադիր—տէր լրագրոյս, Գ. Կ. Գ. Պալարապետ : Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԱՆՆ